

## Արման Եղիազարյան

### ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՀԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՅԻ ՇՈՒՐՋ («Մեր ապագան վտանգուած» գրվածքի արդիականությունը)

Բանալի բառեր - Նժդեհ, հայրենիք, ապագա, սփյուռք, Արարատյան դաշտ  
Հայաստանի Հանրապետություն, բարոյական ուժ, «Մեծ հայրենիք»:

1921թ. հաստատվելով արտասահմանում՝ Հայաստանի առաջին Հանրապետության նախկին ղեկավարները սկսեցին գործունեություն ծավալել այլ իրականության մեջ: Սփյուռքում իր գործունեությամբ և, հատկապես, լայն գաղափարախոսական հենքով առանձնանում է Գ. Նժդեհը: Նրա սփյուռքյան գործունեությունը և գաղափարախոսական մոտեցումները պայմանավորված էին հետևյալ իրողություններով և դրանց խոր ընկալմամբ:

1. Գ. Նժդեհը և նրա գաղափարակիցները ստիպված հեռացան Հայաստանից՝ զրկված հայրենիքի ապագան կերտելուն ուղղակի մասնակցելու գրեթե բոլոր հնարավորություններից:

2. Խորհրդային Հայաստանի իշխանությունները տարագրության մեջ գտնվող հայ ազգային-ազատագրական շարժման ներկայացուցիչների նկատմամբ բռնել էին թշնամական դիրք:

3. Աշխարհի տարբեր երկրներում հաստատված հայությունը հայտնվել էր բարոյահոգեբանական և աշխարհաքաղաքական ծանր պայմաններում:

Եթե ընդհանուր առմամբ ներկայացնենք ստեղծված իրավիճակը, ապա կարող ենք նշել, որ հայրենի հողի վրա գործելու և Հայաստանի ապագայի կերտմանը մասնակցելու հնարավորությունից բռնությամբ զրկված բազմավաստակ գործիչները օտար միջավայրում շարունակեցին գործել ի շահ Հայաստանի և աշխարհով մեկ ցրված հայության:

Մենք արդեն առիթ ունեցել ենք խոսելու Սփյուռքում «Հոգևոր Հայաստան»-ի «ստեղծման» խնդիրների մասին<sup>1</sup>: Ըստ «Հոգևոր Հայաստանի» գլխավոր գաղափարախոսներ Ս. Վրացյանի և Գ. Նժդեհի՝ կատարվում էր աշխարհում ցրված հայությանը որպես մեկ ամբողջություն ձևավորելու փորձ: Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը քաղաքական դրդապատճառներով աստիճանաբար կտրում էր

<sup>1</sup> Տե՛ս Ա. Եղիազարյան, Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարության հաստատումը Սփյուռքում. «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծումը (հայեցակարգային որոշ դիտարկումներ), «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2011, էջ 41-52:

կապերը Սփյուռքի հետ: Միևնույն ժամանակ կար աշխարհում սփռված հայություն, կար, ի դեմս Գ. Նժդեհի և գաղափարակիցների, նաև հայության քաղաքական ղեկավարություն: Ստիպված լինելով կտրվել մայր հայրենիքից՝ նրանք օտար հողում փորձ էին անում ստեղծելու «Հոգևոր Հայաստան», երբ աշխարհասփյուռ հայությունը ղեկավարվում և ուղղորդվում էր, և ստեղծվում էին նրա ներքին կյանքի տարբեր բնագավառները կարգավորող կառույցներ ու կազմակերպություններ: Գ. Նժդեհը գրում է. «Կտրված մայր հողից և հայրենի ժողովրդի կենցաղից՝ նա (իմա՝ սփյուռքահայությունը-Ա.Ե.) դարձել է հոգեպես անհող և անհայրենիք:...Հայաստանից դուրս, օտարության մեջ, միայն Ցեղի գաղափարն ու պաշտամունքը կարող են փոխարինել հայրենի հողն ու ժողովուրդը:...Այսօր, մխիթարության ու հպարտանքի երկու առարկա ունենք-Ցեղային Շարժումը և մեր մարտական ուժը: Ապրեցե՛ք երկուսն էլ, որ ապրեք իբրև Ազգ և Հայրենիք»<sup>1</sup>: Գ. Նժդեհը կարգախոս էր մշակել. «Երբե՛ք և ոչ մի տեղ՝ առանց հոգևոր Հայրենիքի»<sup>2</sup>: Այսինքն այդ գործունեությունն ուղղված էր Սփյուռքի ամրապնդմանը և հավաքականության ձևավորմանը, որ նույնպես միտված էր Հայաստանի ապագային:

Գ. Նժդեհն ապրում էր Հայաստանի ապագայի մտահոգություններով: Թուրք-բոլշևիկյան համատեղ հակահայկական գործունեության հետևանքով բզկտվել էր Հայաստանի մի հատվածում ստեղծված պետականության տարածքը: Տարածքային կորուստները հսկայական էին: Դրա հետևանքով Հայաստանի անվտանգությունը դարձել էր խիստ մտահոգիչ:

Սույն հետազոտությունը նվիրված է Հայաստանի ապագայի վերաբերյալ փորձված ռազմավարի դիտարկումներին: Այդ դիտարկումները և դրանցից բխող եզրկացություններն արդիական են նաև այսօր, քանի որ Հայաստանի Հանրապետության շուրջ ռազմաքաղաքական իրավիճակի առումով քիչ բան է փոխվել, և մարտահրավերները, որոնք թվարկում է Գարեգին Նժդեհը, առկա են նաև այսօր:

Այդ առումով հատկապես հետաքրքրական է Գարեգին Նժդեհի «էջեր իմ օրագրեն» գրվածքի «խորհրդածություններ» բաժնի երկրորդ հատվածը, որ կրում է «Մեր ապագան վտանգված» խորագիրը<sup>3</sup>: Այնտեղ նա քննարկում է Հայաստանի Հանրապետության սահմանների և նրա շուրջ ռազմավարական զարգացումների խնդիրները:

<sup>1</sup> Տե՛ս Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 1, Եր., 2002, էջ 480:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 82:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 21-23: Նույնը տե՛ս Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Եր., 2006, էջ 26-28: Քանի որ խնդրո առարկա գրվածքը քաղկացած է 3 էջից, մենք այսուհետև այնտեղից մեջբերումներ անելիս հղումներ չենք կատարի:

Այն սկսում է այսպես. «Պիտ ապրի՛ եւ հայ ժողովուրդը: Պիտ ապրի՛, որովհետեւ այդպէ՛ս է ուզում ինքը: Բայց ի՞նչպէս, ինչի՞ շնորհիւ, ի՞նչ տւեալներով, գրաւակա՞նը: Չգիտեմ, մեր ժողովուրդը գիտակցո՞ւմ է, թէ երբեք իր գլխովին կորչելու վտանգն այնքան մեծ չի եղել, ինչպէս այսօր: Գիտակցո՞ւմ է, թէ անցեալում իր վիճակը, իր ֆիզիքական գոյութեան ապահովութեան տեսակէտից աւելի նւազ մտահոգիչ է եղել, քան այսօր: Մինչեւ իր ազատագրական ընդվզումները օտար լծերի տակ, մի տեղ որպէս պարզ ստրուկ, մի այլ տեղ՝ հաւատարիմ հպատակ եւ ամէն տեղ՝ իր քրտինքով տիրող տարրը կերակրող - նա հանդուրժելի էր իշխող ժողովուրդների կողմից: Սակայն այսօր նա այն չէ, ինչ որ էր երկու-երեք տասնեակ տարի առաջ: Նրա հոգեբանութեան հետ փոխել է եւ իր վիճակը»:

Հայը ուզում է ապրել և պետք է ապրի, սակայն վտանգված է նրա ապագան: Կորսված է նրա հայրենիքի մեծ մասը, սակայն նա այլևս ստրուկ չէ: Նա ունեցել է անկախ պետականություն, որն այսօր թեև խորհրդային, սակայն առանձին սահմաններով հանրապետություն է: Թուրքերի համար ինչպես եղել, այնպես էլ անընդունելի է մնում անկախ Հայաստանի գոյության իրողությունը: Գ. Նժդեհը փնտրում է Հայաստանի և հայ ժողովրդի ապագա կյանքի գրավականները: Նա սկսում է Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի և քաղաքական ընդհանուր իրավիճակի գնահատումից. «Արարատեան դաշտի մի մասն է այժմ հայի հայրենիքը<sup>1</sup>, ընկած մահմեդական երկրների ճանապարհի վրայ - մի կամուրջ՝ Արեւմուտքի եւ Արեւելքի մահմեդականութեան համար»: Պատմական դեպքերի բերումով Արարատյան դաշտը, որ մշտապես եղել է Հայաստանի սիրտը, այժմ կիսով չափ Հայաստանինն է, կիսով չափ բռնակցված Թուրքիային: Հայաստանը, գտնվելով թշնամի Թուրքիայի և Ադրբեջանի միջև, դեպքերի դժբախտ բերումով «կամուրջի» դեր կարող է խաղալ: «Այժմ նրա աշխարհագրական դիրքը աւելի մտահոգիչ է, քան իր քաղաքական ճակատագիրը», -ասում է Գարեգին Նժդեհը: Հետաքրքիր դիտարկում է կատարում մեծ ռազմավարը Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի և քաղաքական ճակատագրի միջև: Այսինքն՝ եթե չնայած իրեն բաժին հասած ճակատագրին, հանրապետությունը կարողացել է գոյատևել, ապա նրա ներկայիս աշխարհագրական դիրքը վտանգի տակ է դնում նրա ապագան: Դրան ավելանում է նաև այն իրողությունը, որ Հայաստանի խորհրդային հանրապետությունն անկախ քաղաքականություն վարելու հնարավորությունից զրկված՝ ամբողջությամբ կախված է խորհրդային իշխանությունների կամքից:

<sup>1</sup> Նկատի ունի Հայաստանի խորհրդային հանրապետության ընդգրկած տարածքը:

«Հանրածանօթ իրողութիւն է, որ ռուսական տիրապետութիւնից ազատելու ցանկութեամբ թաթար Ադրբէյջանն երազել է եւ պիտ երազի մի օր տաճիկներին տեսնելու Անդրկովկասում:

Ծանօթ իրողութիւն է եւ այն, որ Տաճկաստանը փորձել է եւ պիտի փորձի մի օր Ադրբէյջանի եւ Դաղստանի իսլամութիւնը, ինչպէս եւ Անդրկովկասի բնական ամրութիւնները դարձնելու պատնէշ Ռուսաստանի դէմ», - շեշտում է Գ. Նժդեհը:

Երկու կարևոր իրողության դիտարկվում. Ադրբեյջանը երազում է թուրքերին տեսնելու Անդրկովկասում, իսկ Թուրքիան էլ ձգտում է կապվել Ադրբեյջանի և Դաղստանի հետ: Այդ ամենն ուղղված են Ռուսաստանի դէմ: Բայց նրանց ճանապարհին կանգնած է Հայաստանը: «Ասել է՝ մեզ, մեր ժողովրդին վիճակւած է մի օր կենաց ու մահու կռիւ մղելու համիսլամ երկրների՝ մեր վրայով իրար միանալու ձգտման դէմ: Դժարի՛ն պայքար»: Թե ինչ աստիճանի մարգարեական են հնչում այս խոսքերը նաև այսօր, մենք կարող ենք դատել ներկա իրադրությունից ելնելով: Կարծես Գ. Նժդեհն այդ խոսքերն ասել է այսօրվա համար:

Այնուհետև, Գ. Նժդեհն անցնում է Հայաստանի Հանրապետության սահմանների քննությանը. «Բացէ՛ք քարտէսը եւ ձեր տեսողութիւնը սեւեռէ՛ք այն փոքրիկ տարածութեան վրայ, որը կազմում է այսօրւայ Հայաստանը՝ Արարատեան դաշտի մի մասը եւ Սիւնեաց երկիրը:

Աչքի անցկացրէ՛ք այն գիծը, որը նրա արդի սահմաններն է կազմում: Տաճիկները Իգտիրում՝ էջմիածնի պատերի տակ: Թաթարը Շարուրում՝ Երեւանի պատերի տակ: Նոյնը Նախիջեւան - Օրդուբադում՝ դարանամուտ՝ Սիւնիքի թիկունքում: Արեւելքից էլ՝ Ադրբէյջանը: Տեսնո՞ւմ էք. դա այլ բան չէ, քան մի երկաթէ օղակ հայ երկրի շուրջը»:

Կարելի է նկատել, որ Գ. Նժդեհը հատկապես վտանգված է տեսնում Հայաստանի Հանրապետության արևմտյան սահմանները: Արևելյան սահմանների մասին նա հատուկ չի խոսում, նշում է միայն՝ «Արեւելքից էլ՝ Ադրբէյջանը»: Նա հատկապես վտանգավոր է համարում Թուրքիային:

Բացի այդ, «Կայ՝ մեր երկրի եւ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը դժարացնող եւ մի այլ պարագայ:

Դիմէ՛ք քարտէսին, նա կը պարզի ձեզ եւ այդ դժբախտ պարագան: Վտանգի դէպքում թշնամին ժամերի ընթացքում կը բաժանի Ալէքսանդրապօլը Երեւանից, իսկ վերջինը՝ Սիւնիքից: Քարտէսը ցոյց կը տայ եւ հետեւեալը. Արաքսի ափով Ադրբէյջանին միանալու համար մահմեդականութեանը հարկաւոր է 2-3 ժամ:

Նոյնը մի այլ գծով՝ Սիսիանի վրայով, կարող է միանալ Ադրբէյջանին գրեթէ նոյնքան ժամանակի ընթացքում: Նոյնը ժամերի ընթացքում կարող է անել եւ Կապանի վրայով: Սեղմ ասած՝ Արեւելքի եւ Արեւմուտքի մահմեդականութիւնը ժամերի

ընթացքում առնուազն եօթը տեղով կարող է զատել իրարից հայկական գաւառակները եւ միանալ, ի հարկէ, հայ ժողովրդի վրայով»: Գ. Նժդեհի հայացքը հառնել է հատկապէս Հայաստանի այն սահմաններին, որոնք, լինելով անցկացված դաշտավայրային տեղանքով, չափազանց խոցելի են: Նա կանխագուշակում է նաև թշնամու հարվածի գլխավոր ուղղությունները՝ դեպի Ալեքսանդրապոլ, դեպի Երևան և դեպի Սյունիք՝ կտրելու Հայաստանի Հանրապետության հիմնական մասերը միմյանցից՝ հյուսիսային հատվածը՝ կենտրոնից և կենտրոնը՝ հարավային հատվածից: Վտանգված է հատկապէս Սյունիքը, որի վրայով Ադրբեջանին միանալու համար թուրքերը կարող են շարժվել Արաքսի ափով, Կապանով կամ Սիսիանով:

Գ. Նժդեհը խոսում է նաև ներքին, ներհայկական վտանգների մասին: «Եթէ Հայաստանի աշխարհագրական դժբախտ դիրքի եւ նրա փոքրիկ ծաւալի հետ հաշիւ առնէք նաեւ մեր ժողովրդի քանակը, նրա հատուծականութիւնը, նրա քաղաքական իդէալը, նրա եւ իր իսլամ հարեւանների փոխյարաբերութեանց առանձնայատկութիւնը, ձեզ համար իր բովանդակ սպառնալիութեամբ կը պարզւի մեր ժողովրդի վտանգւած ապագան»: Ասել է՝ աշխարհագրական վտանգավոր դիրքից բացի ունենք նաև վտանգահարույց ներքին իրավիճակ՝ փոքր քանակություն, այն էլ հատվածական բնութագրով:

«Ծանօթ վիճակի մէջ հայ ժողովուրդը իր արդի հոգեկան կառուցւածքով կարող է իր գոյութիւնը հրաշքով պահել: Այդ դրութեան մէջ վտանգւած է նրա ապագան», -նշում է Նժդեհը: Բայց կյանքը հայրենիքին նվիրած մեծագույն գաղափարախօսը վստահ է, որ հայ ժողովուրդը «ուզում է ապրել որպէս ազգ եւ պիտ ապրի»:

Այնուհետև, «բայց ինչպէ՞ս, ի՞նչ տուեալներով» հարցադրումով Գ. Նժդեհը սկսում է Հայաստանի ապագայի քննարկումը:

«Չկորչելու համար, մեր դարը եւ մեր աշխարհագրական դիրքն ու ծանօթ դժբախտ պայմանները, որոնց մէջ ապրում է մեր ժողովուրդը, պահանջում են լինել ուժեղ, էլի՛ ուժեղ եւ մի՛շտ ուժեղ:

Ապրե՞լ ենք ուզում՝ լինենք ուժեղ ազգովին: Լինենք ուժեղ, ուժեղ ազգովին. ահա՛ հրամայականը: Լինենք ուժեղ այնքան, որ մեր անպարտելիութիւնը առ ոչինչ դարձնի մեզ ծանօթ այն բոլոր դժբախտ պայմանները, որոնք դժարացնում են մեր ցեղի ինքնապաշտպանութեան գործը»: Նա շեշտը հատկապէս դնում է բարոյահոգեբանական միասնության և ուժի վրա, քանի որ «Թւական, թեքնիք, ընդհանրապէս նիւթական տեսակէտից մեր ժողովուրդը, հասկանալի պատճառներով, երբեք չի կարող ուժեղ լինել իր հարեւաններից: Սակայն ոյժը՝ միայն նիւթական ազդակները չեն, այլ եւ մի ժողովրդի առաքինութիւնները»: Քանակապէս և նյութապէս գերակշռություն ունեցող թշնամիներին հակազդելու համար հայը պետք է կրողը դառնա

«առաքինությունների», այսինքն՝ Նժդեհի խոսքով՝ ձեռք բերի «հոգեբանական գերադասութիւն» և «բարոյական ոյժ», որոնք «աշխարհի պէս հին, բայց միշտ էլ թարմ եւ հրաշագործ, որին տիրապետող ազգը քիչ անգամ է գլուխ ծռել իրենից նիւթապէս տասնապատիկ ուժեղ թշնամու առաջ: Բարոյակա՛ն ոյժն է գօտեանդում փոքր ժողովուրդներին ու բանակներին անհաւասար կռուում. նա՛ է դէպի յաջողութիւն ու յաղթանակ առաջնորդում թւապէս թոյլերին՝ մեծամեծ հակառակորդների դէմ: Նա՛ եղել է եւ է՛ այսօր միակ ապաւէնը մեզ նման փոքր ժողովուրդների:

Եւ այսօր, մեր դրութեան մէջ, միայն նա՛ - բարոյական ոյժը, կարող է ապրեցնել մեզ: Ուրեմն, ճանաչենք նա որպէս մի ընդհանուր Աստուածութիւն, լինենք ուժեղ - արեւի տակ մեր տեղն ու գոյութեան իրաւունքը պահելու համար»:

XXI դ. սկզբին, երբ քաղաքական իրավիճակը տարածաշրջանում այնքան էլ չի տարբերվում Գ. Նժդեհի օրոք տիրող իրավիճակից, խիստ կարևոր է նրա վերոհիշյալ մտքերը խորությամբ ըմբռնելը: Դրանք ամփոփ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. Հայաստանի Հանրապետությունը ներկա սահմաններով մշտապես գտնվում է վտանգի ներքո:

2. Թուրքիան և Ադրբեջանը փորձելու են միավորվել, և եթե այդ միավորումն իրականանա, տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության տարածքի վրայով:

3. Թուրքիայի և Ադրբեջանի համար եղել և մնում է անընդունելի անկախ Հայաստանի գոյությունը:

4. Թշնամին սկզբանապես փորձելու է Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժել 3 ուղղություններով, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության աշխարհագրական պայմաններից: Այդ ուղղություններն են՝

ա. դեպի Գյումրի (այս ուղղությամբ թուրքերն արշավել են 1918 և 1920 թվականներին),

բ. դեպի Երևան (այս ուղղությամբ ևս թուրքերը փորձել են արշավել 1918 և 1920 թվականներին, թեև Երևան չեն հասել),

գ. դեպի Սյունիք՝ Կապանի, Սիսիանի կամ Մեղրու վրայով (թշնամու հարձակման այս ճանապարհները Գ. Նժդեհին ծանոթ էին սեփական փորձից),

5. թշնամու նմանատիպ հարձակումը Հայաստանի Հանրապետության տարբեր հատվածները բաժանելու է միմյանցից՝ թուլացնելով միասնական պաշտպանություն կազմակերպելու հայության հնարավորությունները,

6. Եթե միաժամանակ հարձակում գործի նաև Ադրբեջանը [արևելքից և հարավ-արևմուտքից (Շարուրից Երևան ուղղությամբ)], ապա Հայաստանի Հանրապետությունը կհայտնվի ծանրագույն վիճակում:

Այդ ամենը, սակայն, չի հուսահատեցնում Գ. Նժդեհին: Նա, որ իր մի բուռ քաջերով 2 տարուց ավելի Ջանգեզուրը հաջողությամբ պաշտպանել էր թուրքական, ադրբեջանական և խորհրդային բանակների հարձակումներից և առիթի դեպքում դիմել հակահարձակման, գիտի, թե ինչ կարող է հակադրել հայությունը թվով և նյութական ռեսուրսներով իրեն բազմակի գերազանցող թշնամուն: ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒԺ, ահա՛ հայության հետագա կյանքի գրավականը:

Քանի որ Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը, սահմանները, ինչպես նաև արևմուտքից և արևելքից սպառնացող թշնամիները վտանգում են հայ ժողովրդի ապագան, ապա հասկանալի է, որ Գ. Նժդեհը պետք է խոսեր նաև հայրենատիրության մասին: Թեև հայրենատիրությանը նա անդրադառնում է այլ տեղում, սակայն անհրաժեշտ է դրանք դիտարկել փոխկապակցվածության մեջ: Խնդիրն այն է, որ Հայկական պետությունը աշխարհագրական պայմանների առումով կարող է անվտանգ և անխոցելի լինել միայն Հայկական լեռնաշխարհի սահմաններում, որը բնաշխարհագրական մի ամբողջություն է իր դիրքով և միջավայրով: Գ. Նժդեհը հայության ապագան կապում է հայրենիքին վերատիրելու հրամայականի հետ: Նա ուղղակիորեն հայրենատիրության պահանջ է դնում հետագա սերունդների առջև: Դիմելով հայ երիտասարդությանը՝ նա գրում է «Կա՛յ, հա՛յ երիտասարդութիւն, կա՛յ Մեծ Հայրենիքը, որ քոնը պիտ լինի վաղը:

Բայց ասա՛, օրւայ քո հոգեկան կառուցւածքով պիտ կարողանա՞ս նրան տէր դառնալ ու մնալ: Խոստովանի՛ր, արժանի՞ ես նրան:

Այո՛, եթէ հոգեփոխւեցիր եւ հոգեփոխեցիր ժողովուրդդ»<sup>1</sup>:

Այսինքն հայի բարոյական ուժը, որ պետք է նրան հնարավորություն տա հավասարը հավասարի պայքարելու թշնամիների դեմ, պետք է կառուցված լինի նաև «Մեծ Հայրենիք»-ին արժանի դառնալու գաղափարի և հնարավորության վրա: ԱՐԺԱՆԻ ԴԱՌՆԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ՝ հզորությամբ, բարոյական ուժով, ահա՛ Գ. Նժդեհի նշած՝ Հայաստանի և հայության ապագայի երկրորդ կարևոր գրավականը: Հայրենատիրությունից է կախված Հայաստանի և հայության անվտանգ ապագան:

Ամփոփելով՝ նշենք, որ ինչպես Գ. Նժդեհն էր հայ ազգային-ազատագրական շարժման առաջին սերնդի գործիչների փառքը տեսնում հայության բարոյահոգեբանական հեղաշրջման մեջ<sup>2</sup>, այնպես էլ Գ. Նժդեհի փառքը կարելի է տեսնել Հայաստանի և հայության ապագայի վերաբերյալ անընդհատ մտորումների և նրանց հետագա կյանքի գլխավոր գրավականները պարզաբանելու և գալիք սերունդներին մատուցելու միջոցով՝ Հայաստանի և հայ ժողովրդի ապագայի

<sup>1</sup> Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Երկեր, հ. 1, էջ 90:

<sup>2</sup> Սույն տեղում, էջ 139-140:

կերտմանը մշտապես մասնակից լինելու մեջ: Գ. Նժդեհը գրում է. «...ինչպես Նազովրեցու մեծութիւնը նրա մէջ չէ, որ պատմութեան մէջ մի քանի փաստեր թողեց, այլ՝ որ զգայապաշտ մարդկութեան նոր իդէալներ տուաւ եւ մի այլ աշխարհի կարօտով հոգիները վառեց, այնպէս էլ մեր նորագոյն պատմութեան ...հերոսներն ու առաքեալները արժէք դարձան ո՛չ թէ իրենց յաջող կամ անյաջող կռիւներով, այլ՝ նրանով, որ առաքինութիւնների մի նոր տախտակ դրին իրենց ժողովրդի առջեւ: Նրանց գործի մեծութիւնը ո՛չ թէ փաստերի արձանագրութեամբ պիտի արժէքաւորուի, այլ՝ այն զօրութեանկան բարոյականով, որ կը բխի իրենց գործի էութիւնից»<sup>1</sup>:

Կարող ենք վստահությամբ արձանագրել, որ հայ ժողովրդի առջև դրվող «առաքինությունների մի նոր տախտակ» են նաև Գ. Նժդեհի կողմից բարձրացված բարոյական ուժի և հայրենիքին արժանի դառնալու գաղափարները:

**Арман Егиазарян, Наблюдения Гарегина Нждэ о будущем Армении-** Гарегин Нждэ, один из величайших идеологов армянской действительности, имеет важные наблюдения о будущем Армении, которые собраны в статье под названием "Наше будущее в опасности". Согласно ему, Армения оказалась против серьезных вызовов, потому что Турция и Азербайджан, ее соседние государства, всегда будут пытаться соединиться друг с другом. Такой союз может быть реализован только через территорию Армении.

**Arman S. Yeghiazaryan, The observations of Garegin Nzhdeh on the future of Armenia-** Garegin Nzhdeh, one of the greatest ideologists of the Armenian reality, has important observations about future of Armenia, which were gathered in the paper called "Our future in danger". According to it, Armenia faces great challenges, because Turkey and Azerbaijan, its neighbour states, will always try to unite with each other. Such a union could be realized only through the territory of Armenia.

**Արման Եղիազարյան** - պատմական գիտ. դոկտոր, ԵՊՀ սփյուռքահայության ամբիոնի վարիչ:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 139: